պանվել (աղ. I, 7)։ Ալիքաձև և ուղիղ գծերից զատ այն կրում է դրոշմով արված համակենտրոն շրջանակներ, որոնք միացված են միմյանց շեղ գծերով։ Համադրելու դեպքում այս զարդաձևը գրեթե նույնանում է վերը բերված ապարանջանի վրա եղած զարդաձևին։ Նույն այս զարդաձևը և առավել շատ նրա առանձին տարբերակներն են կրում Հայաստանի տերիտորիայից ծագող բազմաթիվ խեցանոթները։ Նշված կավանոթին մասնավորապես մոտ են Արթիկի № 15 քարհանքի տերիտորիայից գտնված անոթները։ Այդ նույնությունը այնքան է ակնառու, որ պետք է ենթադրել, որ Կիրզայի օրինակը ևս իր ամբողջական վիճակում պետք է ունենար հյուսածո կանթ՝ ինչպիսին կրում է Արթիկի № 87 դամբարանի սուփորը[34]։

Չնայած դրոշմով արված համակենտրոն շրջանակներ կրող խեցանոթների առկայությանը, առայժմ Հայաստանի տերիտորիայից չեն գտնվել դրոշմներ։ Եվ ընդհակառակը՝ դրոշմներ հայտնի են Հյուսիսային Կովկասում այն դեպքում, երբ ա՛ռ այսօր բացակայում են դրանց միջոցով զարդարված խեցանոթները[35]։

Կավանոթների մեջ կան նաև սև փայլով մեծ թասի, գավաթ-կճուճի, ինչպես նաև սնագույն, ավազախառն կավից պատրաստված կոպիտ անոթի մեկական օրինակներ։ Թասը լայնաբերան է, ուղիղ դրված պատերով, կտրված շրթով, ընդգծված հատակով (աղ. I, 11)։ Երթի տակ այն ունի անցք՝ կախելու համար։ Թասի շուրթը զարդարված է քառատամ գործիքի միջոցով արված ալիքաձև գծերով, իսկ իրանի վերին մասը՝ զուգահեռ խորադիր գծերով։

Գավաթը, որը իրանի կենտրոնում կրում է մի կանթ, ունի դուրս ճկված շուրթ, օգտագործումից մաշված տափակ հատակ (աղ. I, 8)։ Զարդարված է երկու զուգահեռ և դրանց նկատմամբ թեք տեղադրված խորադիր գծերով։ Պատրաստված է ձեռքով։ Ձեռաձեւի է նաև հավաքածուի վերջին կավանոթը, որն իրանի կենտրոնում և հատակային մասում զարդարված է եղունգավոր նախշով (աղ. I, 9)։ Նման կավանոթները հայտնի են խոհանոցային անվան տակ։

Ձգանրանալով նշված խեցանոթների զուգահեռների և դրանց առնչությունների հարցի վրա, նշենք, որ կավանոթների այս երեք տիպն էլ իրենց բազմաթիվ տարբերակներով հանդերձ մեծ թիվ են կազմում ուշ բրոնզի դարի և դրան հաջորդող շրջանի հնավայրերում։

Ինչ վերաբերում է Կիրզայի հնագիտական հավաքածուի 2-րդ խմբի ժամանակագրական սահմաններին, ապա ակներև է, որ այդ խմբի առարկաների մի մասը լայնորեն կապվում է մ. թ. ա. XIII—XII դդ. թվագրվող հուշարձանների հետ, այնինչ մի ուրիշ մասը նմանվում է մ. թ. ա. I հազարամյակի սկզբի նյութական մշակույթի առարկաներին։ Ժամանակագրական այս առնչությունները թույլ են տալիս Կիրզայի հնագիտական հավաքածուի 2-րդ խումբը ժամանակագրել մ. թ. ա. XII—IX դդ.։

Ս. ԱՄԻՐՅԱՆ

ԱՆՏԻԿ ԴԱՄԲԱՐԱՆ ԼԻՃՔՈՒՄ

1967 թ. Հայկական ՍՍՀ Մարտունու շրջանի Լիճք գյուղում հոր փորելիս բացվել է սալարկղային դամբարան, որտեղից հայտնաբերվել են ապակյա երեք սրվակ, կավե մի փոքրիկ պուլիկ և ոսկրե երեք զարդ։ Սևանի ավազանում տարբեր ժամանակներում մասնակի պեղումների շնորհիվ և պատահաբար գտնվել են անտիկ շրջանի դամբարաններ, սակայն այդ նյութերի միայն մի մասն է մեզ հասել, իսկ Լիճքիդ մինչ այժմ այդպիսիք հայտնի չէին։ Ժողովածուն հետաքրքիր է նաև նրանով, որ իրերից մի քանիսը առաջին անգամն են հանդիպում։

Առանձնապես ուշադրության է արժանի մանուշակագույն, հաստ ապակուց պատրաստված, գնդաձև իրանով երկկանթանի սրվակը (նկ. 1), որի ամբողջ իրանն ու վիզը ծածկված են սպիտակ ու դեղնավուն խալերով (բարձր.՝ 9,5 սմ, հատ. տր.՝ 3 սմ, պս. տր.՝ 3,6 սմ)։ Սա նմանօրինակ զարդերով առաջին սրվակն է Հայաստանում։ Նրա խալերը չեն թափանցում սրվակի պատերով, ի տարբերություն millefiori (հազարան ծաղիկ) կոչվող անոթների։ Սրվակի մակերեսի խալերն այն տպավորությունն են ստեղծում, կարծես հեղուկ ապակին վրձինով շաղ է

34 Т. С. Хачатрян, Материальная культура..., էջ 120, աղ. XXIV, 5։

35 Е. И. Крупнов, Новые «пинтадеры» из сел. Сержень-юрт (Чечено-Ингушетия). Новое в советской археологии, М., 1965, էջ 194, նկ. 1, 3։ В. И. Козенкова, Исследование памятников раннего железного века у сел. Сержень-юрт (Чечено-Ингушетия), КСИА, М., 1967, № 112, նկ. 28(5)։

տրված դեռևս տաք վիճակում գտնվող անոթի վրա։ Սակայն անտիկ ապակեգործական տեխնիկայի համար դա գրեթե անհնարին էր։ որովհետև ապակու զանգվածը հոսունության աստիճանի հասցնելը մեծ դժվարությունների հետ էր կապված։ Նման անոթները պատրաստվում էին հետևյալ եղանակով. կիսով չափ փչված տաք սրվակի մակերեսին նախօրոք մանրացրած տարբեր գույնի ապակու բեկորներ շաղ տալուց հետո սրվակը կրկին տաքացնում էին ու փչում։ Այդ ընթացքում ապակու հատիկները հալվելով ձուլվում էին սրվակի պատերին, մինչև վերջնական ձևավորումը։ Ահա թե ինչու այդ անոթների խալեռը ձգված են լինում, երբեմն կոշտ ու ցցված, ինչպես Լիճքի սրվակի խալերի մի մասը։

Այս եղանակով պատրաստված անոթները բաժանվում են երկու խմբի. առաջին խումբը, որն ավելի հին է, ծածկված է մանր, խիտ, բազմագույն խալերով, իսկ երկրորդի խալերը խոշոր են, ցանցառ և գեղեցիկ ու աշխույժ տեսք են հաղորդում անոթին[1]։ Լիճքում հայտնաբերված սրվակը պատկանում է երկրորդ խմբին։

Նման անոթների թիվն ընդհանրապես մեծ չէ, և, ինչպես վկայում են հայտնաբերված նմուշները, դրանք պատրաստվել են Հռոմեական կայսրության և՛ արևելյան (Սիրիա), և՛ արևմտյան (Հյուսիսային Իտալիա) մարզերում։ Սիրիան հին աշխարհի ապակեգործության ամենախոշոր կենտրոններից մեկն էր, որտեղ կատարվել էին տեխնիկական մի շարք նորամուծություններ։ Այն փառաբանված էր հատկապես կաղապարի մեջ պատրաստվող ուռուցիկ զարդերով և ձևավոր անոթներով։ Սիրիական ապակեգործներին է պատկանում նաև անոթները «շաղ տալու» եղանակով զարդարելու պատիվը։ Սիրիական ապակին արտահանվում էր անտիկ աշխարհի գրեթե բոլոր երկրները։ Ապակեգործների մի մասը աշխատել է ոչ միայն Սիրիայում, այլև ուրիշ երկրներում, այնպիսի վայրերում, որտեղ դրա համար պայմաններ կային։ Հյուսիսային Իտալիայում հայտնաբերված «շաղ տալու» եղանակով զարդարված անոթների ու բեկորների մի մասի վրա պահպանվել է պատրաստող վարպետի անունը։ Այդ վարպետների մեծ մասը՝ Արիստոնը, Էյրինայոսը, Նեյկոնը, Ֆիլիպպոսը, նշանավոր Էնիոնը, ըստ իրենց թողած արձանագրությունների, Սիդոնից են։ Օր. Արտասը իր անունը թողել է երկու լեզվով՝ հունարեն ու լատիներեն՝ ARTAS—APTAC, SIDO—CEIΔΩ։ Այս վարպետներից մի քանիսը հետագայում արևելքից տեղափոխվել են Իտալիա։ Ենթադրվում է, որ Արտասի արհեստանոցը եղել է Հյուսիսային Իտալիայում, հավանաբար Իստրիայում[2]։

«Շաղ տալու» եղանակով պատրաստված լավագույն անոթները գալիս են Օգոստոսյան շրջանից, իսկ ընդհանրապես նրանք հարատևել են մինչև մ. թ. I դարի վերջը։ Դժբախտաբար Լիճքում հայտնաբերված սրվակի վրա չկա վարպետի անունը, մի բան, որը հնարավորություն կտար որոշելու նրա պատրաստման տեղն ու ժամանակը։ Լիճքի սրվակն իր ձևով շատ նման է Աշնակի երկկանթանի մանուշակագույն և կանաչավուն ապակյա անոթներին, ինչպես նաև Վրաստանում՝ Մցխեթում հայտնաբերված սիրիական ծագում ունեցող սրվակներին[4] (II դար)։ Լիճքի գնդաձև, երկկանթանի, տարբեր գույնի խալերով զարդարված անոթը, լինելով «շաղ տալու» եղանակով պատրաստված առայժմ եզակի սրվակը Հայաստանում, կարևոր է հին Հայաստանի ապակու ուսումնասիրության և սիրիական այդօրինակ արտադրանքի պատրաստման ժամանակն ու տարածման շրջանակները որոշելու համար։

Երկկանթանի այս տեսակի անոթներն իրենց գոյությունը շարունակում են մինչև III—IV դարերը։ Դուրա-Եվրոպոսում[5] և սիրիական մյուս հնավայրերում հայտնաբերված[6] անոթները

---

[1] Fr. Fremersdorf, Römische gläser mit buntgefleckter oberflache. Festschrift für August Oxe Zum 75. Geburtstag 23 Juli 1938. Darmstadt, 1938, էջ 118։

[2] Նույն տեղում, էջ 120։

[3] R. W. Smith, Glass from the Ancient World, New York, 1957, № 158; Chr. Simoneti, Tessiner Graberfelder, Basel, 1941, էջ 115, Abb. 95; Ludwig Berger, Römische glaser aus Vindonissa, Basel, 1960, Tafel 4, №№ 60—69; „Художественное стекло", Ленинград, 1967, նկ. 13։

[4] Р. В. Кинжалов, Ашнакский могильник, „Труды" Гос. Эрмитажа, т. V, Ленинград, 1961. էջ 54, 55, 58, № 141 (к$_3$. 6254), № 144 (к$_3$. 6255); Н. Н. Угрелидзе, Стекло в древней Грузии, Тбилиси, 1961, նկ. 9: А. М. Апакидзе, Г. Ф. Гобеджишвили, А. И. Каландадзе, Г. А. Ломтатидзе, Мцхета I, Тбилиси, 1958, էջ 94 և հտ., տախտ. LXXIII$_4$։

[5] The Excavations at Dura-Europos, Final rep. IV, p. V, Leiden, 1963, էջ 113, տախտ. XXXIV, նկ. 565։

[6] Edith Spartz, Antike gläser, 1967, նկ. 70, R. W. Smith, նշվ. աշխ., № 212, A. Kisa, Das glas im Altertume, Band III, Formentafel B, no. 130.

1



2

3

4

5

վկայում են, որ վերոհիշյալ գնդաձև երկկանթանի սրվակները բնորոշ են Սիրիային և արտադրվել են նաև Սիդոն քաղաքում, որտեղից և ներմուծվել է Լիճքի սրվակը, որը պատկանում է I դարի վերջին—II դարի սկզբին։ Այս թվագրմանը չեն հակասում նաև նրա հետ հայտնաբերված մյուս իրերը։

Լիճքում հայտնաբերված ապակյա անոթներից երկրորդը տանձաձև իրանով, գլանաձև վզով անկանթ սրվակ է (նկ. 2)։ Պատրաստված է բաց կանաչավուն հաստ ապակուց, ազատ փչելու եղանակով, ունի հարթ հատակ և դեպի դուրս լայնացող պսակ (բարձր.՝ 12,5 սմ, հատ. տր.՝ 5,6 սմ, պս. տր.՝ 3,6 սմ)։ Տանձաձև իրանով սրվակներ Հայաստանում հայտնաբերվել են Վերին Դետաշենում (ՊՊԹ 1835), Գառնիում[7]։ Լիճքի սրվակը համանման է հատկապես Գառնիի տանձաձև անոթներից երկուսին՝ մեկը բաց կանաչավուն (ՊՊԹ 2100/37), մյուսը՝ կապտականաչավուն ապակուց։ Տանձաձև սրվակները լայն տարածում ունեին անտիկ աշխարհում։ Հայտնի են Վրաստանից, Կերչից. վերջիններից մեկը պահվում է Էրմիտաժի անտիկ բաժնում (П. 1910. 5). մյուսը Օքսֆորդի Աշմոլյան թանգարանում։ Ըստ Դ. Բ. Հարդենի կանաչավուն ապակուց պատրաստված այդօրինակ սրվակները բնորոշ են I և II դարերի արևելյան արտադրանքին, սակայն նման ձևեր հանդիպում են նաև արևմուտքում[8]։ Հնդկաստանի տարբեր վայրերից հայտնաբերված այդպիսի սրվակները Մարշալը համարում է մ. թ. I դարի II կեսի արտադրանք և կարծում է, որ դրանք ուշ հելլենիստական և հռոմեական շրջանին բնորոշ կապտավուն անոթներից են, որոնցից գտնվել են Արևմտյան Ասիայում ու Արևմտյան Եվրոպայի մեծ մասում[9]։ Հունաստանում[10], Գերմանիայում, Լեհաստանում և արևմտյան Եվրոպայի մյուս հնավայրերում հայտնաբերված նմանօրինակ սրվակները նույնպես թվագրվում են I և II դարերով[11]։

Հայաստանում գտնված տանձաձև սրվակները իրենց ձևերի առանձնահատկություններով ու երանգով[12] աղերսվում են Դուրա-Եվրոպոսի[13] (Սիրիա) և Կիպրոսի[14] ապակեղենի հետ։ Լիճքի և Դառնիի սրվակները հարակից և զուգահեռ նյութերով թվագրվում են մ. թ. I դարի երկրորդ կեսով, II դարի սկզբով և ներմուծվել են հավանաբար Սիրիայից կամ Կիպրոսից։

Երրորդ սրվակը բաց կանաչավուն հաստ ապակուց է պատրաստված (նկ. 3), ունի ձվաձև իրան, ընդգծված ուսեր, ներճկված հաստ հատակ, որի վրա երևում են պորտի հետքերը և դեպի դուրս լայնացող հորիզոնական պսակը (բարձր.՝ 12,5 սմ, պս. տր.՝ 3,4 սմ, հատ. տր.՝ 2,6 սմ)։ Ինքնատիպ ձև ունեցող այս անոթներից շատ է հայտնաբերվել Հայաստանում՝ Գառնիում, Կողբում, Վերին Դետաշենում, Սևանում և այլուր։ Դրանք իրարից քիչ տարբերվում են երանգով (գերակշռողը կանաչն է) և ապակու որակով։ Առայժմ այս սրվակներին որոշակի նմանություն ունեցող անոթներ հայտնի են միայն Վրաստանում[15] և Ադրբեջանում[16], այսինքն՝ նրանց տարածման շրջանակ-

---

[7] Б. Н. Аракелян, Гарни I, Ереван, 1951, նկ. 44, տախտ. 24, Г. А. Тирацян, „О торговых связях Армении с Сирией в античное время, „Палестинский сборник", вып. 4 (67), Москва—Ленинград, 1959, էջ 75։

[8] D. B. Harden, Ancient glass, Antiquity, vol. VII, 1933, էջ 424, նկ. 3։

[9] J. Marshall, Taxila, Cambridge, 1951, տախտ. 210, 1, 2, 3։

[10] Griechische Altertümer Südrussland und sorts aus dem Besitz. V. Vogell, Kassel, 1908, նկ. 36։

[11] Cl. Isings, Roman glass, Form 28 a; Fr. Fremersdorf, Romisches Buntglas in Koln, 1958. Köln, B. III, տախտ. 57, 58, Robert Zahn, Sammlung Baurat schill (Berlin), Berlin, նկ. 246, B. Filarska, Szkta Starozytne, էջ 188—189, տախտ. XLIII 1, 3։

[12] Г. А. Тирацян, նշվ. աշխ., էջ 75—76, Ж. Д. Хачатрян, Материальная культура древней Армении в V в. до н. э. —IV в. до н. э., Автореферат канд. диссертации, Ереван, 1966, էջ 15—16։

[13] N. Toll, The Necropolis. The Excavations at Dura-Europos preliminary Report of the Ninth season of Work 1935—1936, New-Haven, London, 1946, տախտ. XLIV, գերեզմ. 24—IV, № 14—16, տախտ. XXXIX, գերեզմ. 11 վերջիրը, տախտ. LV, գերեզմ. 41, № 4, գերեզմ. 47, № 7։

[14] The Suedish Cyprus Expedition, v. IV, p. 3 (The Hellenistic and Roman periods in Cyprus). Stockholm, Lund, 1956, էջ 156, 201 և հտ., նկ. 48, 22, 26։

[15] И. Н. Цицишвили, Гробница у станции Мцхета, КСИИМК. 54, 1954, էջ 121 և հտ., նկ. 55—2, М. Придик, Новые кавказские клады, Материалы по Археологии России, № 34, էջ 106, տախտ. V։

[16] С. М. Казиев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, էջ 25, տախտ. XXXIV; Т. И. Голубкина, М. М. Расулова, О связях древнего мира, „Ученые записки" Аз. Госунта (сер. истории и философии), 1967, № 3, էջ 86, տախտ. III 3։

ները դուրս չեն գալիս Անդրկովկասի սահմաններից, ուստի համարվում են տեղական արտադրանք և թվագրվում մ. թ. I—II դարերով[17]։

Լիճքի դամբարանում հայտնաբերված միակ խեցեղեն անոթը փոքր պուլիկ է, որը պատրաստված է կարմրավուն մանրահատիկ կավից (նկ. 4), ունի գնդաձև իրան, դուրս ծալվող պսակ և օղակաձև ցածր ոտք (բարձր.՝ 8,5 սմ, պս. տր.՝ 4,8 սմ, հատ. տր.՝ 4 սմ)։ Պուլիկը պատրաստված է դուրգի վրա, մակերեսը պատված է կարմիր անգոբով և լավ փայլեցրած է։ Պուլիկն իր մշակումով ու ձևով հիշեցնում է հելլենիստական շրջանի խեցեղեն անոթները[18], սակայն, իր համեմատաբար բարձր վզով, կլորացող պսակով ու օղակաձև՝ կենտրոնում թումբ ունեցող ոտքով, որն ավելի բնորոշ է մ. թ. I դարերի խեցեղենին[19] տարբերվում է հելլենիստական շրջանի պուլիկներից։ Այն վկայում է, որ հելլենիստական ավանդույթները շարունակվել են նաև I—II դարերում։

Հետաքրքիր հարդարանք ունեն ոսկրե երկու շքասեղն ու ձողիկը (նկ. 5)։ Շքասեղներն ավարտվում են ոչխարի քանդակ ունեցող գլխիկներով (բարձր.՝ 12 սմ)։ Ոչխարներից մեկի առջևի և ետևի ոտքերի միջև անցք կա, մյուսի վրա խազերով ցանց է պատկերված։

Ձողիկի մի ծայրը, որը կտրած բրգի ձև ունի, հարդարված է փորագիր, շեղանկյան ձև ունեցող զարդերով, մյուս ծայրն ավարտվում է ռելիեֆ երեք օղակով (բարձր.՝ 19 սմ)։ Երեքն էլ լավ փայլեցված են։ Ոսկրե նման շքասեղներն ու զարդերը շատ տարածված են մ. թ. առաջին դարերի դամբարաններում։

Լիճքի ոսկրե իրերը իրենց ձևերով ու զարդերով շատ նման են Գառնիի I—II դարերի դամբարաններում հայտնաբերված շքասեղներին[20]։ Հավանաբար կիրառական նշանակությունից բացի նրանք ունեցել են նաև պաշտամունքային նշանակություն։

Այսպիսով, Լիճքի դամբարանը պատկանում է մ. թ. I դարի վերջին—II դարի սկզբին։

Լիճքի դամբարանում հայտնաբերված նյութերը չնայած փոքրաթիվ են, սակայն իրենց ինքնատիպությամբ լրացնում, հարստացնում են մեր գիտելիքները Հայաստանի առաջին դարերի նյութական մշակույթի վերաբերյալ, ինչպես և վկայում այդ ժամանակաշրջանում Հայաստանի և Սիրիայի միջև եղած առևտրական ու մշակութային սերտ փոխհարաբերությունների մասին։

---

[17] Б. Н. Аракелян, Гарни II, Ереван, 1957, էջ 68, Г. А. Тирацян, Опыт периодизации истории материальной культуры древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 2, էջ 87, Ж. Д. Хачатрян, նշվ. աշխ., էջ 16, Ժ. Դ. Խաչատրյան, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 12, էջ 75։

[18] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 255, տախտ. II_4։

[19] Б. Н. Аракелян, Гарни II, տախտակ VIII—X։

[20] Նույն տեղում, էջ 75, նկ. 43։

Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ